ԵՎՍ ՄԵԿ ՆԱՀԱՏԱԿ



ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սլավիկ Ավագի Հայրապետյան, ծնված 1948 թ. Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Դաշ-Բաշի գյուղում:

1972 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Զորակոչվել է բանակ և մոտ 10 տարի ծառայությունից հետո վերադարձել և 1987 թ. աշխատանքի անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Ընկերների վկայությամբ, ամենից շատ սիրել է երեխաներին: Ղարաբաղից 1988 թ. թվով 100 երեխա իր անմիջական նախաձեռնությամբ հանգստացել են «Սևան» ճամբարում: Մոտ մեկ ամիս Սլավիկը մասնակցել է Վարդենիսի շրջանի սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանությանը: Զոհվել է 1990 թ. հունիսի 24-ին «փառապանծ կարմիր բանակի» դեսանտայինների կողմից, Հայաստանի հանրապետության տերիտորիայում:

...Երանի քեզ չհանդիպեի և մեր երկաժամյա զրույցը քո մահով ավելի չիմաստավորվեր և ավելի ողբերգական չդառնար, քան է:

Հիշում եմ, խոսում էինք օրհասից, ինքնապաշտպանությունից, ֆիդայու պատվախնդրությունից, ինչպիսի ցավով էիր դու խոսում զենքի և ֆիդայու անունը արատավորող, հայրենասերի դիմակ հագած երեկվա «ապերոներից»:

...Ինքնապաշտպանական ջոկատների միացումը հնարավոր է,— պնդում էիր դու, — եթե լինի բոլորին համախմբող մի ընդհանրական նպատակ. մենք միավորված էինք, քանի դեռ պայքարում էինք միայն Արցախի համար, իսկ հիմա բաժանված ենք, որովհետև պայքարում ենք իշխանության, նաև չգիտեմ ինչ-ինչերի և վերջում նաև Արցախի համար: Այն ժամանակ կար միայն ազգային ձգտում, իսկ այժմ կա նախ կուսակցական, խմբային շահեր... Երբ երեկվա հայ ազգայնականները, որ հայրենասիրության դարդից քաղցկեղ էին ընկել, իսկ հիմա դեպուտատացավից կուրացել, ոչինչ չեն տեսնում, թուրքերը գտել են ելքը... թուրքերը այլևս չեն հարձակվում, նրանք կաշառում են կարմիր բանակի զինվորներին, կաշառում են փողով, սպիրտով, մի կտոր ոսկորով, նրանք օգտվելով հատուկ դրության արտոնություններից, կարող են սպանել, թալանել և մնալ անպատիժ... կարող են հարձակվել զրահամեքենաներով, ուղղաթիռներով, դեսանտայիններով, կարմիր գլխարկավորներով... Այսպես մեր զրույցը շարունակվեց և չեմ հիշում ինչպես խոսք գնաց լաց ու ողբի մասին... դե մենք թաղում, սուգ սիրող ժողովուրդ ենք, որ բավական է հուշարձաններով, լացկանությամբ սրանից-նրանից գութ ու մխիթարանք ակնկալենք և ինչ նախախնամություն. դեռ մեկ շաբաթ չանցած քո մարտական ընկերները հազիվ են զսպում իրենց վիշտը՝ զինվորական գլխարկդ տեսնելով քո անշունչ կրծքի վրա:

Այս ինչ ծաղկաքաղ է սկսել մեր թշնամին: Քո մահը և մեր կորուստը առավել թանկ ու անդառնալի է, որովհետև մենք կորցրինք ոչ թե գաղափարակիր, այլ գաղափար, ոչ թե զինվոր, այլ զինվորական, ոչ թե մարտիկ, այլ մարտավար:

Քո մահով ես մեկ անգամ ևս կանգնեցի ճշմարտության դեմ-հանդիման, երբ փոքրիկ տղաս լսելով կարմիր բանակայինների վայրագությունների մասին, թե ինչպես են նրանք կրակել նույնիսկ ձիերի և ոչխարի հոտի վրա, պատանդ վերցրել վիրավոր մարդու, և Հովին զարմանքից լայնացած աչքերը ինձնից չկտրելով, այս էլ քանի երորդ անգամ կրկնում է նույն հարցը,— ինչո՞ւ կարմիրները մեր կողմից չեն... Հիասթափելով լսածներին, նա ցնում-բերում է իր դասագիրքը, մոլորված, խաբված թերթում էջերը. «Ամենազոր ու հաղթական բանակ, մեր սովետական»:

ՈՉ, ԱՍՈՒՄ ԵՍ ԴՈՒ ՔՈ ՄԱՀՈՎ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ԲԱՆԱԿԸ ՉԷ:

ԳԱԳԻԿ ՄԱՆԱՍՅԱՆ